ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(20 սեպտեմբերի , կիրակի, 1998 թ.)

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Սուրբ Պատարագ մատուցեց Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսի կարգադրությամբ հընթացս մատուցվող Ս. Պատարագի, ձեռամբ գերաշնորհ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի և խարտավիլակությամբ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի, կատարվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի այս տարվա տասնմեկ շրջանավարտների սարկավագական ձեռնադրությունը՝ Վազգեն Քեսաբլյան, Մանուկ Ղալաչյան, Վիգեն Ղազարյան, Մկրտիչ Այվազյան, Սուշեղ Հովհաննիսյան, Արա Նալչաջյան, Նորայր Ավետիսյան, Վարդան Բաղումյան, Սամիկոն Ավետիսյան, Սամվել Կիրակոսյան, Ռոբերտ Օհանյան:

Ըստ մեր եկեղեցու սրբազան ավանդության, համաձայն «Ձեռնադրության Մաշտոցի», նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, նորընծաները ստացան կիսասարկավագության աստիճան՝ ձեռամբ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի և խարտավիլակությամբ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանի:

Սեպտեմբերի 20-ին, սարկավագական ձեռնադրության ընթացքում, խարտավիլակ Հայր Սուրբը՝ Բաբկեն աբեղա Սալբիյանը, վկայում է նորընծաների պատրաստությունն ու ձեռնադրությանն արժանի լինելը՝ ասելով. «Գիտեմք եւ վկայեմք զսոսա արժանաւոր գոլ առ ի բառնալ զլուծ աստիճանաց ունելով սրբութիւն եւ իմաստութիւն»: Այս վկայությունն իբրև հիմք ունենալով ձեռնադրող Սրբազան Հայրը «Շնորհօք Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» նորընծաներին դպրության աստիճանից հրավիրում է սարկավագության պաշտոնի:

Նորընծաները, խարտավիլակի առաջնորդությամբ, ծախակողմյան աստիճաններով բարձրանում են Ավագ խորան և, դառնալով դեպի ժողովուրդը, «զձեռսն ի վեր ունի ապի ի բաց ի ձև հրաժարման» ի նշան հրաժարման, «Աստուածային եւ երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «ի սպասաւորութիւն Սրբոյ եկեղեցւոյ»: Ապա նորընծաները շրջվում են դեպի գահին բազմած ձեռնադրող Սրբազան Հայրը, որը և իր աջը դնելով նրանց գլխին արտասանում է. «Տէր Աստուած ամենակալ ծգեայ զաներեւոյթ աջ քո եւ օրհնեա զսոսա արժանաւոր լինել կոչման սպասաւորութեան Ս. Եկեղեցւոյ» աղոթքը: Ձեռնադրող Սրբազան Հայրը ընծայալներին տալիս է Ավետարանը՝ իշխանություն շնորհելով նրանց եկեղեցում հանդիսավորապես Ս. Ավետարանը ընթերցելու: Այնուհետև տալիս է բուրվառ և իշխանություն եկեղեցում խնկարկելու:

Հավարտ ձեռնադրության՝ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը շնորհավորական և խրատական խոսք հղեց նորընծաներին՝ մասնավորապես նշելով.

«Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի տասնմեկ շրջանավարտների սարկավագական ձեռնադրությունը, որ կոչվում է կարգ «Ձեռնադրության սարկավագության»: Դարեր շարունակ մեր նախնիները երազել են այն օրերը, երբ Հայաստանյայց եկեղեցին կկարողանա կրկին բազում սարկավագներ, բազում հոգևորականներ, քահանաներ ու վարդապետներ ձեռնադրել այստեղ՝ Մայր Աթոռի այս նվիրական կամարների տակ: Այսօր քարոզ չէ, որ ուզում եմ տալ, այլ խոսքս ուղղելով մեր նորընծա սարկավագներին, որպես և խորհուրդն է իրենց իսկ ձեռնադրության ըստ «Ձեռնադրության Մաշտոցի», մաղթում եմ իրենց լինել արժանի սպասավորներ Հայաստանյայց եկեղեցու, լինել բանիմաց ախոյաններ մեր ժողովրդի, լինել հարազատ ժառանգներն ու աշակերտները Հիսուս Քրիստոսի:

Սի պահ ձեռնադրության արարողությունից

Այսօր թերևս ամենամեծ ուրախության տոներից մեկն է այստեղ, քանզի այն, ինչ որ երազել են մեր նախնիք՝ հոգևորականներ, կաթողիկոսներ, չեն կարողացել տեսնել այս շքեղությունը, այս նոր վերընծայումը Հայ եկեղեցու: Դո՛ւք, սիրելի սարկավագներ, ձեր վրա ունեք և՛ օրհնությունը, և՛ պատասխանատվությունը, և՛ իրագործումն այն երազների, որ ունեցել են մեր հոգևորականները, համայն մեր ժողովուրդը դարեր շարունակ: Մեր սիրեցյալ Կաթողիկոսի գլխավորությամբ վստահորեն կկարողանանք համատեղ ծառայել Աստծուն, ծառայելով հավատով ու նվիրումով, կկարողանանք ծառայել մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդին: Ուստի բոլորս միասին աղոթում ենք ձեր նոր սկսած ճանապարհի համար: Թող Աստված առաջնորդի և ուղղություն տա ձեզ, և թող որ ձեր հայացքը մշտապես հառած լինի Լուսավորչի կանթեղին, որպեսզի այդ երազանքով, այդ լույսի ճանապարհով կարողանանք առաջնորդել մեր ժողովրդին:

Մեր բոլորի օրհնությունները թող լինի նորընծաների վրա, և ինչպես ծեռնադրության կարգի ժամանակ է ասվում, բոլորս միասին աղոթենք այս սարկավագների ճակատագրի, նվիրումի, իմաստության և աշխատանքի համար: Թող Աստված օրհնի մեզ բոլորիս՝ մեր ժողովրդին և նորընծա մեր սիրելի սարկավագներին. ամեն»:

Այնուհետև Վերափառ Հայրապետը իր խոսքն է ուղղում նորընծա սարկավագներին մաղթելով նրանց հետայսու առավել բարձր պահել հայ հոգևորականի սուրբ և նվիրական կոչումը:

«Հայր մեր»-ից առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր խոսքն է ուղղում համայն հայությանը՝ ի Հայաստան, ի Ղարաբաղ և ի սփյուռս աշխարհի՝ բարձր գնահատելով այն ազատությունը, այն ինքնիշխան ու ինքնակամ ապրելակերպը, որ Հայ ժողովուրդը ձեռք բերեց իր անկախությամբ: Վեհափառ Հայրապետը շնորհավորում է ողջ հայությանը անկախության յոթերորդ տարեդարձի առիթով:

ՄՈՒՇԵՂ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ